

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

**Ս. Էջմիածին**

Վեհափառ Տեր,

Ի խորոց սրտի շնորհավորում եմ Ձեր ծննդյան 82-ամյակը՝ բարձր գնահատելով Ձեր անձնական ավանդը հայ ժողովրդի հոգևոր անաղարտության պահպանման ու բազմապատկման գործում, կարևորելով Հայ Առաքելական Եկեղեցու անփոխարինելի դերը ամբողջ աշխարհում: Հայապահպանության բազմաբարդ խնդրում վստահ եմ, որ Ձեր հայրապետությամբ Հայ Եկեղեցին այսուհետև ևս առավելագույն նպաստ կբերի մեր ժողովրդի ազգային զարթոնքին, նոր պետականության հաստատմանն ու ամրապնդմանը:

Ցանկանում եմ արևշատություն, անսպառ եռանդ՝ ի բարօրություն մեր ժողովրդի:

**ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան,
22 սեպտեմբերի 1990 թ.